ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՇՊՀ), ի դեմս ռեկտոր Երվանդ Մերոբյանի, ով գործում է ՇՊՀ Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և Տվերի «ԱՐԱՐԱՏ» ազգային-մշակութային ինքնավարությունը (այսուհետ՝ «ԱՐԱՐԱՏ»), ի դեմս նախագահ Ելենա Գևորգյանի, ով գործում է «ԱՐԱՐԱՏ»-ի Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով համագործակցության ապահովման, Կողմերի կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է:

2. Հուշագրի նպատակը և համագործակցության հիմնական ուղղությունները

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև կրթական և մարզամշակութային ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա/ ՇՊՀ-ում և «ԱՐԱՐԱՏ»-ում իրականացվող կրթական ծրագրերի և մարզամշակութային միջոցառումների մասին տեղեկությունների տրամադրում, համատեղ ծրագրերի ու միջոցառումների իրականացմանն ուղղված աշխատանքների քննարկում և կազմակերպում (նաև հեռաուսուցման միջոցով),

բ/ սովորողների և դասախոսների/ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումների, վարպետության դասերի, կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում,

գ/ համատեղ հանրապետական և/կամ միջազգային աշխատաժողովների կազմակերպում,

դ/ մյուս Կողմին արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում որպես գործընկեր ներգրավում,

ե/ Կողմերի իրականացրած այլ կրթական, մշակութային ծրագրերին, կազմակերպած միջոցառումներին մասնակցություն:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1.Կողմերն իրավունք ունեն հանդես գալու Հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու անցկացման նախաձեռնողի դերում:

3.2.Համագործակցության նպատակով, Հուշագրի հիման վրա, Կողմերը պարտավորվում են.

ա/ ժամանակին միմյանց փոխանցել համապատասխան տեղեկատվություն, որը վերաբերում է Հուշագրով նախատեսված համատեղ ծրագրերի ու միջոցառումների անցկացմանը,

բ/ անվճար հիմունքներով խորհրդատվություն տրամադրել ծրագրի ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերում,

գ/ ապահովել անհրաժեշտ նյութական բազա և պայմաններ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու և միջոցառումներ անցկացնելու համար,

դ/ նախօրոք տեղյակ պահել միմյանց համագործակցության ընթացքում առաջացող խնդիրների միասին և համատեղ ուժերով ապահովել դրանց լուծումը:

4. Հուշագիրն ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները

4.1. Հուշագիրը բաղկացած է 3 էջից և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

4.2.Հուշագիրը կազմված է հայերեն և ռուսերեն երկու հավասարազոր օրինակներից, և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

4.3. Հուշագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո, եթե որևէ Կողմից այլ առարկություն չի լինում, ապա Հուշագրի գործունեության ժամկետն ինքնըստինքյան շարունակվում է ևս 5 տարի:

4.4. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.5. Կողմերից մեկի նախաձեռնությամբ Հուշագրի դադարեցման անհրաժեշտության դեպքում մյուս Կողմը պետք է տեղեկանա այդ մասին գրավոր՝ ենթադրյալ լուծման պահից առնվազն 10 օր առաջ:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1.Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

6. Կողմերի իրավաբանական հասցեները

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ կերպություն
Հասցե՝ ք. Գյումրի, փ. Պ. Սնակի-4
Էլ. Հասցե՝ info@shsu.am
Հեռ.՝ +374 312 6 94 94

Տվերի քաղաքային հասարակական կազմակերպություն Հայկական ազգային-մշակութային ինքնավարություն «ԱՐԱՐԱՏ»
Հասցե՝ Քաղաք Տվեր՝ Փողոց Չայկովսկու 19-ա
Էլ. Փոստ՝ tver-ararat@yandex.ru
Հեռ.՝ +7903-805-28-89.

Ռեկտոր
Արմենակ Սերոբյան

Նախագահ
Եղենա Գևորգյան

«13» 12 2022թ.

«13» դեկտեմբերի 2022թ.